

## ԿԱՐԾԻՔ

Եսայան Մերի Սամվելի «Անգլերեն գիտական տեքստերի թարգմանության ուսուցման մեթոդիկական մասնագիտական կողմնորոշման դասընթացում» թեմայով թեկնածուականատենախոսության՝ ներկայացված ԺԳ. 00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» /անգլերեն լեզու/ մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գիտական տեքստերի թարգմանության ուսուցման մեթոդիկական շատ արագ է զարգանում, քանի որ փոխվում են մոտեցումները, թարգմանության և ուսուցման տեխնոլոգիաները, ձևերն ու հնարները: Վճռորոշ է հատկապես այդ առումով կոմպետենտային և հաղորդակցական մոտեցումների կիրառման դերն օտար լեզուների ուսուցման գործընթացում:

Անգլերենի մասնագիտական կողմնորոշման ցանկացած դասընթաց դժվար է կազմակերպել, քանի որ ՀՀ կրթական համակարգում հիմնականում բավարար չէ օտար լեզվի ուսուցմանը հատկացվող ժամաքանակը, ուսանողների խմբերը տարասեռ են, դրանք չեն ընտրվում ըստ ուսանողների լեզվական մակարդակի, նախասիրությունների և ճանաչողական, մասնագիտական պահանջմունքների: Այս առումով չափազանց կարևոր է մասնագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում ճիշտ մշակված ռազմավարությամբ ուսանողին ծանոթացնել մասնագիտական տեքստերին, խթանել վերջինիս ոչ միայն ընթերցել իր մասնագիտությանն առնչվող օտարալեզու գրականություն, այլ նաև ճշգրիտ թարգմանել այն: Քննության առարկա թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում, քանի որ գիտության զարգացման բարձր տեմպերը պահանջում են պատրաստ լինել նոր տեքստեր թարգմանելու, թարգմանել ուսուցանելու:

Ատենախոսության առաջադիր խնդիրն է մշակել տեխնիկական տեքստի թարգմանության ուսուցման համապատասխան ռազմավարություն, որի հիմքում ընկած է անգլերեն գիտատեխնիկական տեքստերի թարգմանության ուսուցման մեթոդական համակարգը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից:

Ներածական մասում ատենախոսը ձևակերպում է հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան և խնդիրները, գիտական վարկածը, առաջադրում է պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության՝ «Անգլերենի գիտատեխնիկական /ֆիզիկայի/ ենթալեզվի ուսուցման առանձնահատկությունները» խորագրով առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին գլխի «**Անգլերենի գիտատեխնիկական /ֆիզիկայի/ ենթալեզվի ուսուցման առանձնահատկությունները**» ենթագլխում ատենախոսը բացահայտում է գիտական ոճի և գրական լեզվի գործառական այլ ոճերի տարբերությունները, գիտական ենթալեզվի առանձնահատկությունները դրա ուսուցման տեսանկյունից:

Երկրորդ՝ «**Գիտատեխնիկական տեքստի բառապաշարի ուսուցման առանձնահատկությունները**» խորագիրը կրող ենթագլխում նա ներկայացնում ֆիզիկայի ենթալեզվի առանձնահատկությունները: Մերի Եսայանը վերլուծում է ուսուցողական նպատակներով նյութերն ընտրելու և գնահատելու սկզբունքները, ինչպես նաև ուսանողների մասնագիտական, ճանաչողական, հեռանկարային պահանջմունքները:

Երրորդ՝ «**Գիտատեխնիկական տեքստի քերականական կառույցների ուսուցման դժվարությունները**» ենթագլխում Մերի Եսայանը վերլուծում է անգլերենի քերականական կաղապարները, լուսաբանում դրանք տիպական օրինակներով: Կարևոր է այն, որ ատենախոսը ներկայացնում է քննության առարկա քերականական կառույցները գիտական տեքստի թարգմանության ուսուցման տեսանկյունից:

Ատենախոսության՝ «**Անգլերենի գիտատեխնիկական տեքստի թարգմանության ուսուցման մեթոդական համակարգը և դրա փորձարարական հիմնավորումը**» խորագրով երկրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Երկրորդ գլխի առաջին «**Ուսանողի մեդիատիվ կոմպետենցիայի ձևավորման նախադրյալները գիտատեխնիկական տեքստի ուսուցման գործընթացում**» ենթագլխում ատենախոսը հստակորեն սահմանում է «մեդիացիա» հասկացությունը, ներկայացնում է դրա բաղադրիչները և կիրառման

առաձնահատկությունները: Ատենախոսը սահմանում է նաև «մեդիատիվ կոմպետենցիա» հասկացությունը, ներկայացնում է այն ձևավորելու և զարգացնելու օպտիմալ մոդելը, որը ստեղծելիս հաշվի են առնվել տեքստի վերլուծության մոդելների բովանդակությունը և գործառական բնութագրերը:

Համապարփակորեն վերլուծվում են ատենախոսի կողմից տեքստի թարգմանական վերլուծության գործընթացում օգտագործվող մեթոդները՝ փոխառությունը, պատճենումը, բառացի թարգմանությունը կամ փոխատեղումը:

Ատենախոսը համապատասխան հիմնավորմամբ ներկայացնում է առաջարկվող մոդելի կարևոր բովանդակային բաղադրիչ հանդիսացող հաղորդակցական, փոխհատուցման, ինչպես նաև բառապաշարի ուսուցման ռազմավարությունները:

Ատենախոսության նորույթներից մեկն այն է, որ ըստ առաջարկվող մոդելի ընտրվում են մեդիատիվ հմտությունների և կարողությունների զարգացմանն ուղղված բառապաշարային-քերականական, վերլուծական և թարգմանական վարժությունները:

Երկրորդ՝ **«Ֆիզիկայի մասնագիտական տեքստի թարգմանության ուսուցման վարժությունների համակարգ»** ենթագլխում Մերի Եսայանը դասակարգում է թարգմանական վարժություններն ըստ դրանց կատարման ընթացակարգերի:

Հեղինակի կողմից հստակորեն մշակված են նախաթարգմանական վարժությունները: Արդյունավետ են նաև լեզվական հմտությունների ձևավորմանը միտված վարժությունները՝ բառապաշարի հարստացման, բառապաշարի ճիշտ օգտագործման կամ փոխակերպման և այլն:

Համապատասխան վերլուծությամբ ընտրվում են նաև թարգմանական վարժությունները՝ թելադրություն-թարգմանություն (Dictation-translation), վերացական թարգմանություն (Abstract translation in written form), կոնկրետացում, ընդհանրացում (Concretization/ generalization) և այլն:

Երրորդ՝ **«Ֆիզիկայի և ինժեներիայի ֆակուլտետի ուսանողների մոտ մեդիատիվ կոմպետենցիայի զարգացումը և դրա փորձարարական հիմնավորումը»** ենթագլխում ատենախոսը ներկայացնում է փորձարարական

ուսուցման գործիքակազմը, ընթացքը և արդյունքները: Նրան հաջողվում է համապատասխան փորձարարական ուսուցման միջոցով հիմնավորել առաջարկվող մեթոդիկայի արդյունավետությունը:

Դրական է այն, որ փորձարարական ուսուցման ընթացքում ուսանողներին առաջարկվում են տեխնիկական, ֆիզիկայի ոլորտին վերաբերող անգլերեն բնագրեր: Նորույթ է նաև այն, որ գիտական տեքստի թարգմանության ուսուցման գործընթացը կարգմակերպվում է կոմպետենտային մոտեցման տեսանկյունից: Ատենախոսին հաջողվել է հիմնավորել առաջարկվող ուսուցման նոր ռազմավարության արդյունավետությունը, ինչի մասին վկայում են վիճակագրական տվյալները:

Կարելի է փաստել, որ առաջարկվող մեթոդական համակարգը կարող է կիրառվել ոչ լեզվական բուհում մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման գործընթացում:

Դրական գնահատելով Մերի Եսայանի իրականացրած հետազոտությունը, այդուհանդերձ կցանկանայինք ներկայացնել որոշ դիտարկումներ.

1. Կարելի էր ավելի հստակ ներկայացնել բուն մասնագիտական և լեզվական գիտելիքները, երբ խոսքը վերաբերում է թարգմանության ուսուցմանը, շեշտը դնելով վերճանաչողական ռազմավարության կիրառման վրա:
2. Կարելի է բառապաշարի յուրացմանը միտված վարժությունները մշակելիս, շեշտը դնել դրական փոխարկման վրա (“positive transfer”): Ցանկալի է, որ ուսանողներն ավելի շատ իմաստի կռահման վարժություններ կատարեին:
3. Կարելի էր հստակեցնել թարգմանության ուսուցման ռազմավարությունն ըստ սովորողների ընկալողական և արտադրողական հմտությունների զարգացման:
4. Աշխատանքում առկա են որոշ լեզվական վրիպումներ և անճշտություններ:

Վերը նշված դիտողությունները և վրիպումները չեն ազդում ատենախոսության տեսական և գործնական նշանակության վրա:

Այսպիսով կարելի է եզրահանգել, որ Մերի Եսայանի «Անգլերեն գիտական տեքստերի թարգմանության ուսուցման մեթոդիկան մասնագիտական կողմնորոշման դասընթացում» խորագրով թեկնածուական ատենախոսությունն ավարտուն, գիտական հետազոտություն է, ամբողջովին բավարարում է <<

գիտական աստիճանաշնորհման 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտության թվանշին, իսկ ատենախոսն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկանծով գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս,  
մանկ, գիտ. թեկնածու, դոցենտ



Մ. Ա. Դարաբյան

Մ.Ա. Դարաբյանի գործընթացի մասին  
հաստատում են ՀՀ ԳԱ Գիտ. քաղ. քաղաք. գործերի նախարար



Մ. Մ. Իսպիրյան

13.03.2023թ.